

Կառույց Աղամյան

*Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի մագիստրանտ,
քրեական իրավունքի և դատավարության ամբիոն*

ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ԿԱՊԱԾ ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԻ ՀԵՏ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ¹

Համառոտագիր

Սույն աշխատանքում հեղինակը ներկայացնում է տնային կալանքի (Arestarea la domiciliu), որպես այլընտրանքային խափանման միջոցի, կիրառման առանձնահատկությունները Հայաստանում: Պայմանավորված տնային կալանքի նորամուծությամբ, ներկայացվում են դրա նորմատիվ իրավական կարգավորումը, իրավակիրառ պրակտիկան, վերջինիս հետ կապված առանձին խնդիրներ, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դիրքորոշումը և այլն: Մասնավորապես, անդրադարձ է կատարվում տնային կալանքի պահման վայրին, կալանքի տակ պահվող անձի իրավունքների կարգավորված չլինելուն, պահման վայրում համատեղ բնակվող անձանց իրավունքներին և անձին՝ տնային կալանք կիրառելուց, դատարան ներկայացնելուն: Ինչպես նաև, քննարկվում են տնային կալանք կիրառելուց զուգահեռ սահմանափակումների հարցը, կալանքի տակ պահվող անձի տեղաշարժման ապահովումը, Բուզադջիի գործով ՄԻԵԴ դիրքորոշումը և այլ վերաբերելի հարցեր:

Ուսումնասիրվում է ինչպես ներպետական իրավունքը՝ դատական պրակտիկայով, այնպես էլ միջազգային փորձը, ներառյալ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքը: Ուսումնասիրությունը կատարվում է՝ 1) սույն ինստիտուտի իրավական կարգավորումը և իրական փորձը ցույց տալու նպատակով; 2) սույն ինստիտուտի զարգացման նպատակով:

Իրողության լույսի ներքո և համապատասխան խնդիրների առկայությամբ պայմանավորված առաջարկվում են այդ խնդիրների լուծմանն ուղղված մոտեցումներ:

Հիմնաբառեր- տնային կալանք, պահման վայր, կալանքի սուբյեկտ, ազատության սահմանափակում, «Բուզադջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության» գործը:

Ներածություն

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի² (30.06.2021 թվական) ընդունմամբ և անցումային դրույթների սահմանմամբ պայմանավորված՝ 2023 թվականի

¹ Հոդվածը ներկայացվել է 26.11.2024թ., գրախոսվել է 25.06.2025թ.:

² Այսուհետ նաև՝ «ՀՀ ՔԴՕ».

հունվարի 1-ին ուժի մեջ մտան տնային կալանքի վերաբերյալ նորմատիվ իրավական կարգավորումները, որոնք նորամուծություն են համարվում Հայաստանի Հանրապետության քրեադատավարական իրողությունում:

Տնային կալանքի ներդրամաբ օրենսդիրը փորձեց հարստացնել խափանման միջոցների առկա ցանկը՝ հնարավորություն տալով իրավակիրառ մարմիններին իրականացնել առավել արդյունավետ գործունեություն՝ քրեական վարույթի շրջանակներում: Արդյունավետությունն արտահայտվեց թե՛ քրեական վարույթի իրականացման տեսանկյունից, թե՛ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության տեսանկյունից:

Սակայն, տնային կալանքի նորամուծություն լինելով պայմանավորված, ներկայիս իրավակիրառ պրակտիկայում (ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային) առաջանում են տարաբնույթ հարցեր և խնդիրներ: Այս ինստիտուտի և դրա հետ կապված արդի հիմնախնդիրների ներկայացմանն է ուղղված այս հետազոտությունը:

1. Տնային կալանքի նորմատիվ իրավական կարգավորումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում

Տնային կալանքի վերաբերյալ կարգավորումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առավելապես տրված են 123-րդ հոդվածում³: Ըստ վերոնշյալ հոդվածի՝ տնային կալանքն իրենից ներկայացնում է ազատության սահմանափակման այնպիսի տեսակ, որի ընթացքում անձը պարտավոր է չլքել դատարանի որոշման մեջ նշված բնակության վայրը (տարածքը): Նույն որոշման մեջ դատարանի կողմից կարող են սահմանվել հավելյալ արգելքներ: Դատարանը իրավասու է արգելել անձին՝ 1) ունենալ նամակագրություն, հեռախոսային խոսակցություններ, օգտվել հաղորդակցության այլ ձևերից, այդ թվում՝ փոստային առաքանուց, 2) շփում ունենալ որոշակի անձանց հետ կամ իր բնակության վայրում հյուրընկալել այլ անձանց: Օրենսդիրը նաև սահմանել է տնային կալանք կիրառելու մասին որոշմանը ներկայացվող բովանդակային և կրման կոնկրետացմանն ուղղված պահանջներ, որոնք, սակայն, բավարար չէն (այս մասին հաջորդիվ): 123-րդ հոդվածը բովանդակում է նյութատեխնիկական կարգավորումներ և հավասարեցնում է տնային կալանքի մեկ օրը կալանքի մեկ օրվան:

Այս խափանման միջոցի հետ առնչվում են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այլ հոդվածներ, որոնք կալանքի վերաբերյալ իրավական նորմերն են և կիրառվում են այնքանով, որքանով վերաբերելի են տնային կալանքին (տես սրա մասին հաջորդիվ):

³ Տե՛ս. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 123. ՀՕ-306-Ն.

2. Տնային կալանքի կիրառման պրակտիկայի տարածվածությունը Հայաստանում

Չնայած նրան, որ տնային կալանքի ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում գործի է դրվել 2023 թվականի հունվարի 1-ից, իրավակիրառ պրակտիկան, հասցրել է ունենալ բավականաչափ փորձ տնային կալանքի կիրառման վերաբերյալ որոշակի գնահատականներ տալու համար:

Ըստ «Իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության զեկույցի⁴ ՀՀ դատախազությունից հարցված տվյալների՝ 2023 թվականին դատարան է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ 114 միջնորդություն, որից բավարարվել է 87-ը, մերժվել՝ 27-ը, իսկ 232 դեպքով դատարանի կողմից կալանքի կամ կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդությունը մասնակի բավարարելու արդյունքում կիրառվել է տնային կալանք տեսակի խափանման միջոց: ՀՀ քննչական կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ նույն թվականին ներկայացվել է տնային կալանքի 91 միջնորդություն, որից 65-ը բավարարվել է, իսկ 26-ը՝ մերժվել:

Ըստ դատական տեղեկատվական համակարգի միայն 2024 թվականի հունվար-հունիս ամիսների դրությամբ առկա է 40-ից ավել դատական ակտ, որտեղ դատարանները քննարկման առարկա են դարձնում տնային կալանքի, որպես այլընտրանքային խափանման միջոցի, կիրառման հարցը: Մեր կողմից իրականացված էմպիրիկ հետազոտությունների արդյունքում հնարավոր դարձավ պարզել, որ 2024 թվականի ընթացքում կայացված վերոնշյալ 40 դատական ակտերի կեսը տնային կալանքի կիրառման ակտեր են: Ուշագրավ է նաև այն փաստը, որ այն հանցագործությունները, որոնց ենթադրյալ կատարման առիթով նշանակվում է, որպես խափանման միջոց, տնային կալանքը, համարվում են միջին ծանրության:

Դատարանները բավականին ակտիվորեն կիրառում են տվյալ խափանման միջոցը վերոնշյալ դեպքերում, արձանագրելով՝ 1) կալանքի կիրառման անհրաժեշտության բացակայությունը, 2) տնային կալանքի՝ կոնկրետ փաստական հանգամանքների համատեքստում, արդյունավետությունը⁵:

3. Տնային կալանքի կիրառման ընթացքում առաջացող խնդիրները

3.1 Պահման վայրի հեղափոխ անհնարինության հարցը

Գործնականում կարող է առաջանալ խնդիր տնային կալանքի պահման վայրի վերաբերյալ՝ այն կարող է դառնալ անհնարին հետագա տնային կալանքը կրելու համար: Այս խնդիրը վերլուծելու համար անհրաժեշտ է անդրադառնալ պահման

⁴ Տե՛ս. Տնային կալանքի և վարչական հսկողության իրավակիրառ պրակտիկան Հայաստանում. Տ. Ղարիբյան, Ա. Մարայան. Իրավունքի կենտրոն ՀՀ. 31 էջ. 2024.

⁵ Տե՛ս. Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումներ՝ ԳԴ/0143/01/24, ԳԴ/0107/01/24, ԳԴ/0097/01/24.

Տե՛ս. Երևանի քրեական դատարանի որոշումներ՝ ԵԴ1/0877/01/24, ԵԴ1/0775/01/24.

Տե՛ս. Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշում՝ ԱԴԴ/0223/01/24.

վայրի տեսակներին և այն դեպքերին, որոնց ժամանակ անձին այնտեղ պահելը դառնում է անհնարին⁶:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատը իր սեպտեմբերի 27-ի թիվ ԵԴ1/0571/06/23 որոշմամբ՝ զարգացնելով նախադեպային իրավունքը տնային կալանքի առթիվ ծագող իրավահարաբերություններում՝ նշել է հետևյալը պահման վայրի վերաբերյալ.

«Նշվածից ակներև է, որ դատական ակտին ներկայացվող ընդհանուր պահանջների հետ մեկտեղ, տվյալ խափանման միջոցը կիրառելու մասին դատական ակտն *inter alia* պետք է պարունակի այդ խափանման միջոցի գործողության ընթացքում մեղադրյալի բնակության տարածքն անհատականացնող տվյալներ, այսինքն, հստակ նշում բնակության այն տարածքի մասին, որտեղ մեղադրյալը պետք է բնակվի դրա գործողության ընթացքում: (...)

Ինչ վերաբերում է «բնակության տարածք» հասկացությանը, ապա այդպիսին կարող է համարվել բնակվելու համար նախատեսված ցանկացած տարածք, որտեղ մեղադրյալն ունի օրինական հիմքերով բնակվելու իրավունք եւ որը, ըստ դատարանի, կարող է ծառայել խափանման այս միջոցի իրագործումն ապահովելու համար: Ընդ որում, պարտադիր չէ, որ բնակության տարածքը մեղադրյալին պատկանի սեփականության իրավունքով: Այս խափանման միջոցի իմաստով, դատարանի որոշման մեջ նշված բնակության տարածք կարող է համարվել նաև մեղադրյալի վարձակալած բնակարանը, այն բնակարանը, որտեղ մեղադրյալը մշտապես կամ ժամանակավորապես բնակվում է դրա սեփականատիրոջ թույլտվությամբ: Այն կարող է ներառել ոչ միայն բնակվելու համար նախատեսված շինությունը, այլ նաև տնամերձ հողամասը եւ հարակից շինությունները: Այլ խոսքով, «բնակության տարածք» կարող է համարվել բնակվելու համար նախատեսված ցանկացած շինություն, որն իրավաբանորեն (բնակվելու իրավական արգելքի բացակայություն) և փաստացի (բնակվելու պայմաններ) կարելի է օգտագործել այս խափանման միջոցի կիրառումն ապահովելու համար:

Վերոգրյալից բացի, տնային կալանք կիրառելու մասին դատարանի որոշման մեջ նշվում են այն կոնկրետ սահմանափակումները, որոնք տարածվում են մեղադրյալի վրա:⁷

Վերոնշյալ որոշումը անշուշտ հանդիսանում է կարևոր ուղեցույց դատավարական նորմեր կիրառող այլ սուբյեկտների համար, քանի որ տալիս է լիարժեք պատասխան այն հարցին, թե ինչ է պետք հասկանալ օրենքում առկա «բնակության վայր» ձևակերպմանը: Ինչպես նաև Բարձր դատարանի այս դիրքորոշումը հստակ տարանջատում է «բնակության տարածք»-ի նորմատիվ և փաստացի չափորոշիչները, նվազեցնելով կամայական կիրառման ռիսկը ու սահմա-

⁶ Տնային կալանքի տակ պահվող անձին հետազոտության շրջանակներում կանվանենք նաև «տնային կալանքի սուբյեկտ» անվանումով:

⁷ Տե՛ս. ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի որոշում, 27 սեպտեմբերի 2024, ԵԴ1/0571/06/23:

նափակելով իրավակիրառ մարմնի հայեցողությունը՝ համահունչ դարձնելով տնային կալանքը ՄԻԵԿ 5-րդ հոդվածի կանխատեսելիության չափանիշին: Միևնույն ժամանակ, բնակության կոնկրետ հասցեի և սահմանափակումների պարտադիր անհատականացումը հնարավորություն է տալիս վերահսկող մարմիններին իրականացնել չափելի և իրավաչափ վերահսկողություն, իսկ պաշտպանության կողմին ունենալ հստակ բողոքարկման առարկա: Այս ամենի առկայությունը հասցնում է տնային կալանքի առավել արդյունավետ կիրառմանը:

ԳԴ/0036/01/24 որոշմամբ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ իր որոշմամբ նույնպես արտահայտել է նմանատիպ դիրքորոշում մեղադրյալի տնային կալանքի պահման վայրի վերաբերյալ և, ըստ էության, մատնանշել բոլոր հնարավոր պահման վայրի տեսակները (ըստ բնակավայրում բնակվելու հիմքերի):

Ինչպես երևում է, իրավակիրառ պրակտիկան տնային կալանքի սուբյեկտի պահման վայրի բավականին լայն ցանկ է ներառում: Բացի անձին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրից նաև հնարավոր տարբերակներ են համարվում վարձակալած բնակարանը կամ սեփականատիրոջ համաձայնությամբ այդ տանն ապրելը: Վերոնշյալի համատեքստում հետաքրքիր է դառնում, թե ինչպես պետք է վարվել եթե անձին սեփականության իրավունքով պատկանող բնակարանը օտարվել է, լուծվել է վարձակալության պայմանագիրը կամ այդ անձին այլևս չէն թույլատրում բնակվել պահման վայրում: Մեր կարծիքով, վերոնշյալ դեպքերում, տնային կալանքի կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինը՝ կրման անհնարինության մասին իմանալիս, անմիջապես պետք է համապատասխան միջնորդությամբ դիմի տնային կալանքը տված դատարան՝ տնային կալանքի կրման պայմանների վերանայման վերաբերյալ⁸: Բացի վերոնշյալի տրամաբանական անհրաժեշտությունից հատկանշական է, որ այս տեսակ կարգավորումներ սահմանված են Գերմանիայի քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածով (Strafprozessordnung (StPO))⁹

«Որոշակի պայմաններում կալանքի օրդերը կարող է փոփոխվել կամ վերացվել, ներառյալ անհրաժեշտության դեպքում **տնային կալանքի տակ պահելու վայրի փոփոխությունը (մզեցված է հեղ. կողմից)**, հարկապես, եթե մեղադրյալը պահպանում է խափանման միջոցի կատարման համար սահմանված պայմանները:»

Նույնանման կարգավորում է նախատեսում Մեծ Բրիտանիայի «Criminal Justice Act» օրենքը¹⁰: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է օրենսդրորեն օժտել պրորազիայի ծառայությանը այդ տեսակ միջնորդություններով հանդես գալու լիազո-

⁸ Նշված առաջարկի տրամաբանությունը հիմնավորվում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի սեպտեմբերի 27-ի թիվ ԵԴ1/0571/06/23 որոշմամբ: Ըստ վերջինիս՝ տնային կալանքը պարունակում է տեխնիկական բաղադրիչ և եթե առաջանան խնդիրներ պահման վայրի ոչ պիտանի լինելու հետ (օր.՝ էլեկտրաէներգիայի բացակայություն, տան տիրոջ անհամաձայնություն և այլն), ապա պրորազիոն ծառայությունն անհապաղ պետք է դիմի դատարան համապատասխան միջնորդությամբ:

⁹ St'p.u. Strafprozessordnung (StPO) — Gesetz über das Verfahren in Strafsachen (StPO), 07.04 1987, BGBl. I S. 1074. 119-րդ հոդված.

¹⁰ St'p.u. The Criminal Justice Act 2003 (CJA 2003), Chapter 44, 20. 2003. Part 1, Section 38.

րությամբ և դատարանին պահման վայրի փոփոխության հնարավորությամբ: Ըստ «Իրավունքի կենտրոն» հկ-ի զեկույցի¹¹ գործնականում մեղադրյալի պահման հասցեի հետ կապված խնդիրներից խուսափելում համար, դատարանները որոշ դեպքերում տնային կալանք կիրառելիս հատուկ նշում էին, որ անհրաժեշտության դեպքում մեղադրյալը կարող է պահվել այլ հասցեում: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս առանց դատարան լրացուցիչ դիմելու իրականացնել հասցեի փոփոխություն: Սակայն, այս տեսակ պրակտիկան միատեսակ չէ, իսկ արդյունավետ պրակտիկայի համար անհրաժեշտ է կամ դրա օրենսդրական ամրագրումը կամ էլ Վճռաբեկ դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումը:

3.2 Համարեղ բնակվողների իրավունքների հարցը

Իրավակիրառ պրակտիկայում մեկ այլ խնդիր է հանդիսանում տնային կալանքի կրման վայրում այլ անձանց բնակության հետ կապված հարցը: Խափանման միջոց կրելը, դրա կատարումն ապահովելու համար տեխնիկական սարքերի տեղադրումը բնակարանում և պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող այլ գործողությունները¹² կարող են որոշակի խնդիրներ ստեղծել տնային կալանքը կրող անձի հետ համատեղ բնակվող անձանց համար: Հատկանշական է, որ այլ երկրների քրեադատավարական օրենսգրքերը նույնպես չեն անդրադառնում տնային կալանքի սուբյեկտի հետ համատեղ բնակվող անձանց իրավունքներին և ազատություններին: Մասնավորապես, այդ տեսակ կարգավորումները բացակայում են Գերմանիայի, Ռուսաստանի, Իսպանիայի և այլ երկրների դատավարական օրենքներում, ինչպես նաև բացակայում է ՄԻԵԴ դիրքորոշումն այս հարցի վերաբերյալ: Սակայն սա չի նշանակում, որ այս հարցը պետք է անտեսել:

Դիտարկենք հետևյալ օրինակը. դատարանն իր որոշմամբ սահմանափակել է տնային կալանք կրող անձին հյուրընկալել և շփվել այլ անձանց հետ: Քանի որ սուբյեկտը չի կարող հյուրընկալել որևէ մեկին, ստացվում է, որ նրա հետ համատեղ բնակվողները նույնպես զրկված են դրա իրավունքից: Ինչպես նշվում է «Իրավունքի կենտրոն» հկ-ի զեկույցի մեջ¹³ բազմաթիվ են դեպքերը, երբ որ բնակարանում համատեղ բնակվող անձինք արտահայտել են իրենց դժգոհությունը այդ տեսակ սահմանափակումների հետ կապված: Նույնիսկ, այդ սահմանափակումների արդյունքում խախտվել են համատեղ բնակվողների աշխատանքի իրավունքը և կրթության իրավունքը (տնային պայմաններում աշխատանք կատարող անձինք՝ ինչպիսիք են վարսավիրները, մատնահարդարները և այլոք զրկվել են դրանով զբաղվելու հնարավորությունից): Այս ամենի լույսի ներքո համատեղ բնակվող անձանց կամաարտահայտումը կարևոր նշանակությունը ունի

¹¹ Տե՛ս. Տնային կալանքի և վարչական հսկողության իրավակիրառ պրակտիկան Հայաստանում. Տ. Ղարիբյան, Ա. Մարայան. Իրավունքի կենտրոն ՀՎ. 31 էջ. 2024.

¹² Տե՛ս. «Պրոբացիայի ծառայության մասին» ՀՀ օրենք. ՀՕ-48-Ն.

¹³ Տե՛ս. Նույն տեղից.

իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Ինչպես իրավացիորեն նշել է Է. Ավագյանը՝

«Երբ մեղադրյալն ապրում է այլ անձանց հետ մեկտեղ (նույնիսկ, եթե նրանք մեղադրյալի ընտանիքի անդամներն են) պետք է ստանալ նաև նրանց գրավոր համաձայնությունը այն մասին, որ վերջիններս դեմ չեն իրենց բնակարանում նման հսկողական սարքեր տեղադրելուն: Այլապես կնշանակի, որ տնային կալանք նախատեսվել է ամբողջ ընտանիքի համար»¹⁴:

3.3 Տնային կալանքի սուբյեկտի իրավունքների հարցը

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը¹⁵ սահմանում է մի շարք իրավունքներ և երաշխիքներ ձերբակալված և կալանավորված անձանց համար: Սակայն, այդ իրավունքները սահմանված չեն և օրենսդրական մակարդակով վերաբերելի չեն տնային կալանքի ենթարկված անձի համար: Այսինքն, ստացվում է մի իրավիճակ, երբ կալանքի ենթարկված անձը օրենքով ունի ավելի շատ իրավունքներ (ինչպիսիք են զբոսանքի իրավունքը, տեսակցությունները և այլն), քան տնային կալանքի ենթարկված անձը և դա այն դեպքում, երբ որ տնային կալանքն առավել մեղմ խափանման միջոց է և պետք է նվազ ինտենսիվությամբ սահմանափակի անձի իրավունքները և ազատությունները: Հաստատապես կարելի է պնդել, որ ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքները պետք է սահմանվեն նաև տնային կալանքի տակ պահվող անձանց համար, իհարկե, հաշվի առնելով այն առանձնահատկությունները, որոնք կարող են առաջանալ տնային կալանքի ռեժիմի սահմաններում: Այս մոտեցումը բխում է նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից: Մասնավորապես, ՄԻԵԴ-ն իր «Լագուտովն ընդդեմ Ռուսաստանի» գործով¹⁶ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝

«Տնային կալանքի խափանման միջոցի կիրառումը պետք է հստակ սահմանվի և սահմանափակվի օրենքի շրջանակներում»՝ մարդու իրավունքներին չարդարացված միջամտությունից խուսափելու համար:

Վերոնշյալը միանշանակ վերաբերելի է սուբյեկտի իրավունքներին և այդ համատեքստում պարզ է դառնում, որ ներպետական օրենսդրությունը, ի թիվս այլ կարգավորումների, պետք է կարգավորի նաև սուբյեկտի իրավունքների հարցը: Այդ իրավունքներից են առողջության պահպանման իրավունքը, զբոսանքի իրավունքը, աշխատանքի և կրթության իրավունքները, բավարար սնունդ ստանալու իրավունքը և այլն: Ի տարբերություն կալանավայրերի՝ տնային կալանքի տակ գնտվող անձն կարող է ապահովված չլինել բավարար սննդով և զբոսնելու հնարավորությամբ, բացի այդ խնդրահարույց է նրա կրթության և աշխատանքի

¹⁴Տե՛ս. Տնային կալանքի իրավական հիմքերը ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում. Է. Ավագյան. ՀՀ Փաստաբանական պալատի գիտական հոդվածներ. 14 էջ.

¹⁵Տե՛ս. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք. ՀՕ-305.

¹⁶Տե՛ս. Lagutov против России (Lagutov v. Russia), заявление № 2872/02, постановление Европейского суда по правам человека от 3 июня 2013 года.

հարցը: Կարող է առաջանալ մի իրավիճակ, երբ անձը զրկված լինի բավարար կերպով սնվելու հնարավորությունից, քանի որ առևտրի գնալ չի կարող, պատվեր կատարել նույնպես (չի թույլատրվում այլ անձանց հետ հաղորդակցվել): Այս դեպքերում, երբ համատեղ բնակվողները բացակայում են կամ չեն կարող ապահովել սուբյեկտի բավարար կերպով սնվելը կամ կեցության հետ կապված այլ հարցեր, անհրաժեշտ է որպիսի պրոբացիայի ծառայությունը ձեռնարկի այդ ուղղությամբ քայլեր՝ ուղղված սուբյեկտին սննդով և այլ բաներով ապահովելու: Այլ հնարավոր լուծում կարող է հանդիսանալ անձին իր կեցության համար անհրաժեշտ գործողություններ կատարելու թույլտվությունը՝ ինչպիսիք են խանութից, դեղատնից, սննդի կետից կամ այլ՝ կեցության համար անհրաժեշտ, վայրերից օգտվելը և անհրաժեշտ մասնագիտական օգնություն ստանալը:

Իսկ ինչպես վարվել զբոսնելու իրավունքի հետ, չէ որ նույնիսկ կալանքի տակ գնտվող անձն իրավունք ունի զբոսնելու՝ ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանման համար: Փաստացի տնային կալանքի տակ գնտվող անձը զրկված է զբոսնելու հնարավորությունից, ինչը կարող է բերել նրա առողջության համար խիստ բացասական հետևանքների: Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է տալ սուբյեկտին այդ իրավունքը, սակայն, բավարար հսկողության պայմաններում: Կարծում ենք իրատեսական է տնային կալանքի տակ գտնվող անձին թույլ տալ օրեկան կամ մի քանի օրը մեկ մի քանի ժամով զբոսնելը՝ պրոբացիայի ծառայության խիստ հսկողության և ուղեկցության ներքո, ինչպես դա արվել է Մեծ Բրիտանիայում¹⁷: Կրթվելու և աշխատելու իրավունքները նույնպես, եթե ոչ ամբողջությամբ ապա մեծամասամբ սահմանափակվում են, քանի որ, մի կողմից անձը չի կարողանում հաճախել աշխատանքի կամ կրթական վայրերը, մյուս կողմից չի կարողանում դրանով զբաղվել հեռախար, քանի որ սահմանափակված է կապի միջոցների օգտագործման մեջ: Սակայն, այս դեպքերում զբոսանքի հարցին տրված լուծումն իրատեսական չէ առաջարկել, քանի որ դրա համար կպահանջվի ահռելի պետական ռեսուրս: Իսկ այդ ռեսուրսի առկայության դեպքում հնարավոր կլինի այս հարցին նույնպես տալ լուծում, ինչպես դա արվել է միջազգային պրակտիկայում¹⁸:

Այս ամենի լույսի ներքո ակնհայտ է, որ տնային կալանքի տակ գնտվող անձանց համար նույնպես պետք է օրենսդրորեն սահմանվեն որոշակի իրավունքներ, որոնք պետք է լինեն առնվազն հավասար կալանքի տակ գտնվող անձանց իրավունքներին: Մինչ այդ անհրաժեշտ է կիրառել օրենքի անալոգիա, տարածել կալանքի սուբյեկտի իրավունքները տնային կալանքի սուբյեկտի վրա՝ իրավակիրառ պրակտիկայում տնային կալանքի ենթարկված անձանց իրավունքները պաշտպանելու համար:

Հատկանշական է, որ Ռուսաստանի և Գերմանիայի օրենսդրությունները նույնպես չեն ներառում տնային կալանքի սուբյեկտի իրավունքների հստակ ցանկ (կոնկրետ իրավանորմ), սակայն, օրենսդրության համակարգային մեկնաբանման արդյունքում որոշակի երաշխիքների առկայությունը դառնում է տեսանելի: Այս

¹⁷ Տե՛ս. The Criminal Justice Act 2003 (CJA 2003), Chapter 44, 20. 2003. Section 14

¹⁸ Տե՛ս. Նույն տեղից.

առումով օրինակելի է Մեծ Բրիտանիայի «Criminal Justice Act» օրենքը, որը համակարգված կարգավորում է տնային կալանքի սուբյեկտի իրավունքները՝ սահմանելով զբոսանքի, աշխատանքային, առողջական և կրթական իրավունքներ:

3.4 Կրման սկիզբը

Տնային կալանքի կրման մեկ այլ խնդիր է այն, որ այն սկսելու համար պրոբացիայի ծառայությանն անհրաժեշտ է առնվազն 3 օր: Այսինքն, այդ 3 օրվա ընթացքում տնային կալանքի ենթակա անձը որևէ կերպ կաշկանդված չէ իր գործողությունների մեջ, ինչը կարող է հանգեցնել վարույթի համար բացասական հետևանքների: Դա պայմանավորված է թե՛ նյութատեխնիկական պատրաստվածությունն ապահովելու խնդրով, թե՛ դատարանի որոշման և տնային կալանքի կրման միջև ընկած հատվածի իրավակարգավորման բացակայմամբ: Այս իրավիճակից խուսափելու համար անհրաժեշտ է պետական ռեսուրսների ավելացում: Ռիսկերից խուսափելու համար՝ ինչպիսիք են անձի փախուստը կամ վարույթի բնականոն ընթացքին այլ կերպ խանգարելը, ցանկալի է կիրառել բացակայելու արգելք խափանման միջոցը մինչև տնային կալանքի մեկնարկը: Իհարկե, մեկ այլ խափանման միջոց կիրառելը տնային կալանքի կրումն ապահովելու համար կարող է որոշակի հարցեր առաջացնել, բայց անհրաժեշտ է նշել երկու հանգամանք: Նախ տնային կալանքի տակ գտնվող անձը չի էլ կարող բացակայել նշված քաղաքից, մարզից կամ երկրից այն կրելու ընթացքում, հետևաբար, բացակայելու արգելքի կիրառումը որևէ կերպ չի վերազանցում տնային կալանքով պայմանավորված սահմանափակումները: Երկրորդը՝ մեկ այլ խափանման միջոցի կիրառումը տնային կալանքն ապահովելու համար տարածված պրակտիկա է այլ երկրների դատավարական իրողության մեջ: Օրինակ ԱՄՆ-ում, ՌԴ-ում և Ֆրանսիայում տարածված է այն մոտեցումը, համաձայն որի մեղադրյալին կարճաժամկետ ազատագրվում են մինչև տնային կալանքի ապահովման համար նախապատրաստական աշխատանքները կիրականացվեն:

3.5 Սուբյեկտի տեղաշարժումն ապահովելու հարցը

Մեկ այլ գործնական խնդիր է տնային կալանքի սուբյեկտի տեղաշարժման հարցը: Գործող օրենսդրության մեջ նշված չէ, թե որ պետական մարմինը պետք է ապահովի անձի դեպի դատարան կամ այլ վարության զործողություններին մասնակցելու համար տեղաշարժման հարցը: Որոշ դեպքերում այդ գործառնություն իրականացնում է ՀՀ ՆԳՆ Ոստիկանությունը, սակայն, դա օրենսդրորեն ամրագրված չէ և հաճախ տնային կալանքի սուբյեկտը մնում է առանց իր տեղաշարժումն ապահովող մարմնի: Ինչպես նշվում է «Իրավունքի կենտրոն» հկ-ի զեկույցի¹⁹ մեջ գործնականում լինում են դեպքեր, երբ որ ոչ ոք չի ուղեկցում տնային կալանքի տակ գտնվող մեղադրյալին դատարան: Եղել է դեպք, որ փաստաբանը զգուշացրել է դատավորին, որ մեղադրյալին ինքը կուղեկցի

¹⁹ Տե՛ս. Տնային կալանքի և վարչական հսկողության իրավակիրառ պրակտիկան Հայաստանում. Տ. Ղարիբյան, Ա. Մարայան. Իրավունքի կենտրոն ՀԿ. 31 էջ. 2024.

դատարան և ստանալով դատարանի թույլտվությունը՝ մեղադրյալը փաստաբանի ուղեկցությամբ բնակության վայրից տեղափոխվել է դատարան²⁰: Վերոնշյալի համատեքստում կարևոր է օրենսդրորեն ամրագրել տնային կալանքի սուբյեկտի տեղաշարժմամբ զբաղվող պետական մարմին և նրա լիազորությունները: Այդ մարմինը կարող է հանդիսանալ ՀՀ ՆԳՆ Ոստիկանությունը՝ ելնելով իր ինստիտուցիոնալ բնույթից, ինչպես նաև պրոբացիայի ծառայությունը, քանի որ հենց վերջինս է իրականացնում հսկողություն տնային կալանքի նկատմամբ: Օրինակ՝ Ռուսաստանում դատավարական օրենքը սահմանում է, որ տնային կալանքի սուբյեկտի տեղաշարժումը ապահովում է խափանման միջոցի նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինը²¹: Վերոնշյալ մոտեցումը հնարավոր է որդեգրել նաև Հայաստանում:

3.6 Չուգահեռ սահմանափակումների կիրառման խնդիրը

Ըստ քրեական դատավարության ՀՀ օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի տնային կալանք կիրառելիս՝

«Դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև՝

1) ունենալ նամակագրություն, հեռախոսային խոսակցություններ, օգտվել հաղորդակցության այլ ձևերից, այդ թվում՝ փոստային առաքանուց.

2) շփում ունենալ որոշակի անձանց հետ կամ իր բնակության վայրում հյուրընկալել այլ անձանց:»

Չնայած այն հանգամանքին, որ այս արգելքների կիրառումը կրում է հայեցողական բնույթ, դատարաններն իրենց որոշումների բացարձակ մեծամասնությունում, տնային կալանք կիրառելուն զուգահեռ, սահմանում են նաև այս արգելքները: Կարծում ենք, որ այդ պրակտիկան պետք է գնահատվի բացասական, քանի որ արգելքների մեխանիկորեն կիրառումը, առանց դրանց լեգիտիմ նպատակի, բավարար հիմքերի առկայության և պատճառաբանվածության ընդունելի չէ: Տնային կալանքի կիրառման յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է գնահատի գործի հանգամանքները, ենթադրյալ կատարված հանցանքը, մեղադրյալին, և միայն բավարար հիմքերի դեպքում իր պատճառաբանված որոշմամբ, տնային կալանքին զուգահեռ սահմանի նաև 123-րդ հոդվածի 2-րդ մասի արգելքները: Ի հավելումն վերոնշյալ հանգամանքների՝ դատարանի կողմից պարզման ենթակա հնարավոր հանգամանքներ կարող են հանդիսանալ նաև անձի կողմից կրթություն ստանալը, աշխատանքը և դրա բնույթը, կեցության հետ կապված հարցերը, բնակության վայրը, համատեղ բնակվող անձինք և այլն: Յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է համապատասխան մոտեցում, օրինակ՝ տնային կալանքի ենթարկված անձը կարող է ունենալ իր խնամքի տակ գտնվող անձի: Այս հանգամանքի լույսի ներքո ողջամիտ է, որ դատարանը չպետք է մեխանիկորեն (ինչպես վարվում է որպես կանոն) սահմանափակի անձի շփման

²⁰ Տե՛ս. Նույն տեղից.

²¹ Տե՛ս. "Уголовно-процессуальный кодекс Российской Федерации" от 18.12.2001 N 174-ФЗ (ред. от 09.11.2024). ст. 107-ая п. 12-ый.

իրավունքը բոլորի հետ: Այս ամենը և ոչ միայն, պետք է հանդիսանան 123-րդ հոդվածի 2-րդ մասի դիսպոզիցիայով սահմանված արգելքների կիրառման համար պարզման ենթակա հանգամանքներ՝ տնային կալանքի առավել արդյունավետ և նպատակային կիրառման համար:

4. Մեղադրյալի և դատարանի փոխհարաբերությունների հետ կապված հարցեր

Հետազոտության սկզբում մենք նշեցինք, որ տնային կալանքի հետ առնչվում են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այլ հոդվածներ, որոնք կալանքի վերաբերյալ իրավական նորմերն են և կիրառվում են այնքանով, որքանով վերաբերելի են տնային կալանքին: Դիտարկենք որոշ գործնական հարցեր կապված դրանց հետ:

4.1 Մեղադրյալի դատարան ներկայանալը տնային կալանք կիրառելիս

Ինչպես հայտնի է՝ քրեական դատավարության ՀՀ օրենսգրքի 123-րդ հոդվածի 5-րդ մասը հղում է կատարում կալանքի իրավական կարգավորումներին՝ տնային կալանքը կիրառելիս: Այդ իրավակարգավորումների լույսի ներքո իրավակիրառ պրակտիկայում առաջացել է հարց, թե արդյոք մեղադրյալը պետք է բերվի դատարան եթե քննիչը ներկայացրել է տնային կալանք կիրառելու մասին միջնորդություն (ինչպես դա արվում է կալանքի դեպքում): ՀՀ ՔԴՕ 108-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը ձերբակալման հիմք է նախատեսում ազատության մեջ գնտվող մեղադրյալին դատարան ներկայացնելը, իսկ ՀՀ ՔԴՕ 111-րդ և 285-րդ հոդվածների իրավակարգավորումները լիազորում են քննիչին՝ մեղադրյալին ձերբակալելու, եթե վերջինս գտնվում է ազատության մեջ և ներկայացնելու դատարան՝ կալանքի միջնորդությունը քննելու համար: Հաշվի առնելով, որ օրենսդիրը կալանքի կիրառման կանոնները տարածել է տնային կալանքի կիրառման վրա՝ համապատասխան հղումն անելով, ինչպես նաև, հաշվի առնելով մեղադրյալի՝ իր նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցը քննելիս դատարանի առջև կանգնելու իրավունքի ու պարտականության առկայությունը, կարելի է եզրակացնել, որ տնային կալանքի դեպքում նույնպես, քննիչը լիազորված է ձերբակալել մեղադրյալին՝ դատարան ներկայացնելու նպատակով:

4.2 Հիմնավոր կասկածի ծագման անմիջականորեն չլինելը որպես միջնորդությունը մերժելու հիմք

Քրեական դատավարության ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը որպես կալանքի միջնորդության մերժման հիմք է նախատեսում հիմնավոր կասկածի ծագման ակնհայտ անմիջականորեն չլինելը՝ հղում կատարելով ՀՀ ՔԴՕ 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, որը բովանդակում է հետևյալը՝

«Ձերբակալումը կարող է կիրառվել՝

1) հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում»:

Արդյոք այս հիմքը, նույնպես, կիրառելի է տնային կալանքի միջնորդության քննության դեպքում: Այս հարցի դրական պատասխանին ուղղված են մի քանի պատճառներ: Նախ այն, որ ՀՀ ՔԴՕ 288-րդ հոդվածի 1-ին մասում խոսք է գնում առհասարակ դատարանի քննությանը ենթակա խափանման միջոցների մերժման կամ բավարարման մասին: Այդ հոդվածը սահմանում է՝

«խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու միջնորդության քննության արդյունքով դատարանը կայացնում է հետևյալ երեք որոշումներից մեկը...

1) միջնորդությունը մերժելու մասին»:

Այսինքն այս նորմը որևէ կերպ չի սահմանափակվում միայն կալանքով և չի բացառում տնային կալանքի քննության դեպքում այդ տեսակ որոշման ընդունումը:

Երկրորդը՝ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումը կալանքի և տնային կալանքի վերաբերյալ այն է, որ կալանք և տնային կալանք խափանման միջոցները կիրառելիս անհրաժեշտ է առաջնորդվել միասնական չափանիշներով (այս մասին տես հաջորդիվ): Հետևաբար՝ այն դեպքերում, երբ դատարանը հանգում է հետևության, որ անձին ձեռքակալելիս հիմնավոր կասկածն ակնհայտորեն բացակայել է, դատարանն իրավասու է ՀՀ ՔԴՕ 288-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի հիման վրա մերժել տնային կալանք կիրառելու մասին միջնորդությունը:

5. Տնային կալանքի կիրառման անհնարինությունը որպես կալանքի կիրառման հիմք

Իրավակիրառ պրակտիկայում կարող է առաջանալ խնդիր, երբ տնային կալանքի կիրառումն անհնարին է, սակայն, առկա են խափանման միջոց կիրառելու բավարար նախադրյալներ: Առաջանում է հարց, արդյոք, երբ առկա է տնային կալանքի կիրառման անհնարինություն և այլ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը թույլ չի տա հասնել խափանման միջոցների ինստիտուտի նպատակներին, պետք է վերոնշյալ հիմքերով կիրառվի կալանք:

Կարծում ենք, որ վերոնշյալ հիմքերի առկայության դեպքում և, միաժամանակ, եթե բացակայում են կալանքի կիրառումը բացառող հիմքեր, տնային կալանքի կիրառման անհնարինությունը, որպես լրացուցիչ (ֆակուլտատիվ) պատճառ, կարող է հանդիսանալ կալանք կիրառելու հիմքերից մեկը: Սակայն, պետք է նշել, որ ելնելով անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից, տնային կալանքի կիրառման անհնարինության նախադրյալները չպետք է առաջանան պետության կողմից: Այլ կերպ ասած, պետական ռեսուրսների անբավարարությունը՝ տնային կալանքն ապահովելու անհնարինության տեսքով, չի կարող հանդիսանալ հիմք կալանքի կիրառման համար: Կարծում ենք, որ պետությունը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները իր կողմից խոչընդոտներ չստեղծելու համար՝ ազատության սահմանափակման հետ կապված խափանման միջոցների կիրառման դեպքերում:

6. ՄԻԵԴ չափանիշները ըստ «Case of Buzadji v. the Republic of Moldova» գործի

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի «Բուզադժին ընդդեմ Մոլդովայի հանրապետության»²² գործը ներկայացնում է իրենից մեծ արժեք տնային կալանքի (Arestarea la domiciliu) և դրա կիրառման տեսանկյունից:

Հատկանշական է, որ վերոնշյալ գործով ՄԻԵԴ-ը, շարունակելով իր պրակտիկան, հավասարացրել է ազատության սահմանափակման հետ կապված խափանման միջոցների (ինչպիսիք են կալանքը, տնային կալանքը և այլն) ռեժիմները՝ նշելով, որ անհրաժեշտ է շարժվել միասնական չափանիշներով այդ տեսակ խափանման միջոցներին անդրադառնալիս: Չնայած դրան, Դատարանը նշում է, որ տնային կալանքն ազատության սահմանափակման ավելի մեղմ միջոց է և, որ ազատության զրկումը պետք է մեկնաբանվի ավտոմատ կերպով: Այս դեպքում տարակուսելի է այն պնդումը, թե արդյոք անհրաժեշտ է շարժվել մեկ միասնական չափանիշներով, ազատության սահմանափակման հետ կապված խափանման միջոց կիրառելիս եթե իրավունքի սահմանափակման ինտենսիվությունը տարբեր է: Միգուցե, Դատարանը այդպիսի պնդում է կատարել՝ հետապնդելով նպատակ ներպետական դատական ատյաններին զգոն պահելը՝ անձանց ազատության իրավունքը սահմանափակելիս:

Այս գործի շրջանակներում ՄԻԵԴ-ը նշել է, որ տնային կալանք կիրառելու յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է բերի կոնկրետ և վերաբերելի փաստարկներ այս խափանման միջոցի կիրառման անհրաժեշտության տեսանկյունից: Այդ փաստարկները չպետք է լինել արբտրակտ և, ինչպես նշում է ՄԻԵԴ-ը «շաբլոնային»:

Մոլդովայի հանրապետությունը, որպես պատասխանող, գործի շրջանակներում նշել էր, որ Բուզադժիի կողմից իր նկատմամբ տնային կալանք կիրառելու միջնորդություն ներկայացնելը՝ վերջինիս կողմից իր ազատության իրավունքի նկատմամբ սահմանափակում կիրառելու թույլտվություն է ենթադրել: Այլ կերպ ասած, հայցվորը, հետևյալ միջնորդությունը ներկայացնելիս, իրականացրել է իրավունքից հրաժարում: ՄԻԵԴ-ն անդրադառնալով այդ հարցին իրավացիորեն նշել է, որ մեղադրյալի կողմից առավել մեղմ խափանման միջոց կիրառելու միջնորդությունը չի կարող ընկալվել որպես իրավունքից հրաժարում: Դատարանն արձանագրել է, որ՝

«Տնային կալանք կիրառելու միջնորդելը կամ դրա կիրառումը չբողոքարկելը հավասարազոր չէ ազատության իրավունքից հրաժարմանը»²³:

Այսպիսով, չնայած ներկայացրած դիրքորոշման վերացական լինելուն, այն հանդիսանում է կարևոր ուղեցույց տնային կալանքի, որպես նոր ինստիտուտի, կիրառման հետ կապված սկզբունքային հարցեր քննարկելուց:

²² St' u. European Court of Human Rights. Case of BUZADJI v. THE REPUBLIC OF MOLDOVA. (Application no. 23755/07). 5 July 2016.

²³ St' u. Նույն տեղից.

Եզրակացություն

Տնային կալանքի նորամուծության հետևանքով քրեադատավարական իրողությունում մենք ունեցանք նոր այլընտրանքային խափանման միջոց, որի առկայությունը թույլ տվեց առավել արդյունավետ հասնել խափանման միջոցների ինստիտուտի նպատակներին և վարույթի առավել բարենպաստ իրականացմանը, միաժամանակ անձի իրավունքների նվազ սահմանափակմամբ:

Հատկանշական է, որ դատարանները բավականին ակտիվ են կիրառում տվյալ խափանման միջոցը՝ ապահովելով անձի իրավունքների պաշտպանվածությունը և առավել նվազ ինտենսիվությամբ սահմանափակելով դրանք՝ կալանքի համեմատ: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի պրակտիկան և միջազգային փորձը նույնպես հանդիսանում են կարևոր աղբյուր տնային կալանքի կիրառման համար: Անհրաժեշտ է նշել, որ կալանքի իրավակարգավորումները առանցքային դեր են խաղում տնային կալանքի կիրառման հարցում, ուստի դրանք նույնպես արժանի են առանձնակի ուշադրության տնային կալանքի կիրառման համատեքստում:

Այնուամենայնիվ, իր դրական կողմերով հանդերձ և նորամուծություն լինելով պայմանավորված, իրավակիրառ պրակտիկայում առաջացան որոշակի խնդիրներ՝ կապված տնային կալանքի կիրառման հետ: Այդ խնդիրների մեծ մասը համակողմանիորեն ուսումնասիրվեց մեր կողմից: Վերոնշյալի լույսի ներքո ցանկանում ենք առաջարկել հետևյալ մոտեցումները, որպես դրանք լուծելու կամ մեղմացնելու միջոցներ: Այդ մոտեցումները հիմնված են ներպետական օրենսդրության և իրավակիրառ փորձի ուսումնասիրման հիման վրա, ինչպես նաև ՄԻԵԴ և միջազգային փորձը հաշվի առնելով, ուստի և առաջարկում ենք՝

1. Տնային կալանքի սուբյեկտի հետ համատեղ բնակվող անձանց իրավունքների խախտումից խուսափելու համար անհրաժեշտ է հաշվի առնել և ստանալ համատեղ բնակվող անձանց համաձայնությունը՝ տնային կալանք կիրառելիս:

2. Տնային կալանքի պահման վայրում հետագա պահումը անհնար լինելու դեպքում անհրաժեշտ է, որ պրոբացիայի ծառայությունը լիազորված լինի դատարանում հանդես գալ միջնորդությամբ՝ տնային կալանքի պահման վայրի վերանայման առաջարկով, իսկ դատարանը դրա փոփոխան լիազորությամբ:

3. Պետք է օրենսդրորեն սահմանվեն տնային կալանքի տակ գնտվող անձի իրավունքները:

4. Տնային կալանքի նշանակման և ի կատար ածման միջև ընկած ժամանակահատվածում՝ ռիսկերից խուսափելու համար, անհրաժեշտ է կիրառել բացակայելու արգելք՝ մինչև տնային կալանքի կիրառման նախապատրաստական աշխատանքի ավարտը:

5. Մեխանիկորեն չկիրառել տնային կալանքին զուգահեռ արգելքները՝ յուրաքանչյուր դեպքում պատշաճ քննության արժանացնելով դրանց կիրառումը:

6. Լիազորել ՀՀ ՆԳՆ Ոստիկանությանը կամ ՀՀ Պրոբացիայի ծառայությանը իրականացնել տնային կալանքի սուբյեկտի տեղաշարժումը:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք. ՀՕ-306-Ն.
The Criminal Procedure Code of the Republic of Armenia. RL-306.
2. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք. ՀՕ-305.
The Law of the Republic of Armenia "On the detention of detained and arrested persons". RL-305.
3. «Պրորացիայի ծառայության մասին» ՀՀ օրենք. ՀՕ-48-Ն.
The Law of the Republic of Armenia "About the Probation service". RL-48-N.
4. "Уголовно-процессуальный кодекс Российской Федерации" от 18.12.2001 N 174-ФЗ (ред. от 09.11.2024).
"Criminal procedure code of the Russian Federation" dated 18.12.2001 No. 174-FZ (as amended on 18.12.2001 No. 174-FZ). from 09.11.2024).
5. The Criminal Justice Act 2003 (CJA 2003), Chapter 44, 20. 2003.
6. Strafprozessordnung (StPO) — Gesetz über das Verfahren in Strafsachen (StPO), 07.04 1987, BGBl. I S. 1074. Strafprozessordnung – StPO) the German Code of Criminal Procedure.
7. ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի որոշում, 27 սեպտեմբերի 2024, ԵԴ1/0571/06/23:
Decision of the Criminal Chamber of the Court of Cassation of the Republic of Armenia, September 27, 2024, ED1/0571/06/23.
8. Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշում՝ ԳԴ/0143/01/24.
The decision of the court of general jurisdiction of the Gegharkunik region-GD/0143/01/24 .
9. Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշում՝ ԳԴ/0107/01/24.
The decision of the court of general jurisdiction of the Gegharkunik region-GD/0107/01/24 .
10. Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշում՝ ԳԴ/0097/01/24.
The decision of the court of general jurisdiction of the Gegharkunik region-GD/0097/01/24 .
11. Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշում՝ ԳԴ/0036/01/24.
The decision of the court of general jurisdiction of the Gegharkunik region-GD/0036/01/24 .
12. Երևանի քրեական դատարանի որոշում՝ ԵԴ1/0877/01/24.
Decision of the Yerevan Criminal Court: ED1/0877/01/24 .
13. Երևանի քրեական դատարանի որոշում՝ ԵԴ1/0775/01/24.
Decision of the Yerevan Criminal Court: ED1/0775/01/24 .

14. Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշում՝ ԱՐԴ/0223/01/24

The decision of the court of general jurisdiction of the Armavir region, ARD/0223/01/24

15. European Court of Human Rights. Case of BUZADJI v. THE REPUBLIC OF MOLDOVA. (Application no. 23755/07). 5 July 2016.

16. Лагутов против России (Lagutov v. Russia), заявление № 2872/02, постановление Европейского суда по правам человека от 3 июня 2013 года.

Lagutov v. Russia (Lagutov V. Russia), Judgment No. 2872/02, Judgment of the European Court of Human Rights of June 3, 2013.

17. Տնային կալանքի և վարչական հսկողության իրավակիրառ պրակտիկան Հայաստանում. Տ. Ղարիբյան, Ա. Մարալյան. Իրավունքի կենտրոն ՀԿ. 31 էջ. 2024.

Law enforcement practice of house arrest and administrative supervision in Armenia. E. Gharibyan, A. Maralyan. NGO Law Center. 31 pages. 2024.

18. Տնային կալանքի իրավական հիմքերը ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում. Է. Ավագյան. ՀՀ Փաստաբանական պալատի գիտական հոդվածներ. 14 էջ.

The legal basis of house arrest in the draft of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia. E. Avakian. Scientific articles of the Chamber of Lawyers of the Republic of Armenia. 14 pages.

Karlos Adamyan

*Master Student at Russian-Armenian University, Department of
Criminal Law and Criminal Procedure*

SOME ISSUES RELATED TO HOUSE ARREST IN ARMENIA²⁴

Abstract

In this paper, the author presents the features of the use of house arrest (*Arestarea la domiciliu*) as an alternative preventive measure in Armenia. In connection with the innovation of house arrest, its regulatory and legal regulation, law enforcement practice, individual issues related to practical application, practice of European court of human rights etc. are presented. In particular, the issues of the place of detention under house arrest are discussed, that the rights of a person under arrest are not regulated, about the rights of persons living together in a place of detention, and how a person can be represented in court when applying house arrest. Issues related to restrictions applied in parallel with house arrest, ensuring the movement of a person under arrest, the position of the ECHR on the Buzaji case and other issues are also discussed.

In work it studies both domestic law, taking into account judicial practice, and international experience, including case law formed by the European Court of Human Rights. The study is being conducted: 1) to demonstrate the legal regulation and the real experience of this institution; 2) to develop this institution.

In the light of existing realities and problems, approaches aimed at improving and solving the latter are offered. International practice is also being studied.

Keywords: house arrest; place of detention; subject of arrest; restriction of freedom; Case of Buzadji v. the Republic of Moldova.

²⁴ The article was presented on 26.11.2024 and was reviewed on 25.06.2025.

Карлос Адамян

*Магистрант права Российско-Армянского университета,
кафедра уголовного и уголовно-процессуального права*

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СВЯЗАННЫЕ С ДОМАШНИМ АРЕСТОМ В АРМЕНИИ²⁵

Абстракт

В данной работе автор представляет особенности применения домашнего ареста (*Arestarea la domiciliu*), в качестве альтернативной меры пресечения в Армении. В связи с новшеством домашнего ареста, представляются его нормативно-правовое регулирование, правоприменительная практика, отдельные вопросы, связанные с практическим применением, подходы Европейского суда по правам человека и т.д. В частности, обсуждаются вопросы о месте содержания под домашним арестом, о том, что права лица, содержащегося под арестом, не урегулированы, о правах лиц, совместно проживающих в месте содержания под арестом, и о том, как лицо может быть представлено в суд при применении домашнего ареста. Также обсуждаются вопросы, связанные с ограничениями, применяемыми параллельно с домашним арестом, обеспечением передвижения лица, содержащегося под арестом, позицией ЕСПЧ по делу Бузаджи и другие вопросы.

Изучается как внутригосударственное право с учетом судебной практики, так и международный опыт, включая прецедентное право, сформированное Европейским судом по правам человека. Исследование проводится: 1) для демонстрации правового регулирования и реального опыта этого института; 2) для развития этого института.

Ключевые слова: домашний арест; место удержания; субъект ареста; ограничение свободы; дело «Бузаджи против Республики Молдова».

²⁵ Статья была представлена 26.11.2024 и прошла рецензирование 25.06.2025.